

ՊԱՇՏՈՆ**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ****ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ****ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ****ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ**

Պլանավորման բաժնի առաջատար մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

Նոյեմբերի 28, 2022թ.

Դեկտեմբերի 16, 2022թ.

Անորոշ

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև թվարկված պարտականությունների կատարման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկի բյուջեի կազմման աշխատանքներին մասնակցություն, այդ նպատակով Բանկի առանձին կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների բյուջեների կազմում
- Բանկի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ բյուջեի քննարկումներին մասնակցություն, անհրաժեշտ կանոնակարգերի, հավելվածների ու փաստաթղթերի մշակում
- Բանկի հաստատված բյուջեի կատարման ընթացքի ամսական, եռամսյակային, տարեկան վերլուծությունների իրականացման աշխատանքներին մասնակցություն, շեղումների բացահայտում և պարզաբանումների պահանջում
- Բանկի տարեկան բյուջեի ցուցանիշներով հաստատված ծախսերի կառավարման գործընթացին մասնակցություն, նախատեսված գնումների նախահաստատման համար կարծիքի տրամադրում բյուջեում ներառված լինելու գծով, անհրաժեշտության դեպքում ծախսերի հիմնավորումների պահանջում, բյուջեից շեղված ծախսերի ուսումնասիրությանը մասնակցություն
- Բանկի և մասնաճյուղերի եկամուտների և ծախսերի վերլուծության մշակում, գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկների մշակման աշխատանքներին մասնակցություն
- Բանկի առանձին բիզնես ուղղությունների եկամուտների և ծախսերի վերլուծությանը մասնակցություն
- Բանկի ադմինիստրատիվ-տնտեսական ծախսերի՝ տարբեր ուղղություններով շահութաբերության հաշվարկների իրականացման նպատակով բաշխման մեթոդաբանությունների մշակման աշխատանքներին մասնակցություն
- Բանկի բյուջեի կատարողականի գծով կանխատեսումների իրականացման համար անհրաժեշտ հավելվածների կազմում, հաշվարկների ամփոփում
- Անմիջական ղեկավարի կողմից պահանջվող այլ հաշվետվությունների և վերլուծությունների տրամադրում
- Բանկի ներքին իրավական ակտերով ու հանձնարարականներով սահմանված այլ գործառնություններ

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ,
- Հաշվապահական նվազագույնը բազային գիտելիքներ,
- Բյուջեի կազմման և վերահսկողության մեթոդներին ծանոթություն
- Ընդհանուր զարգացվածություն,

- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«Այդի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: